

ՀԻՆԳՇԱԲԹԻՆ՝ ԱՆՎԵԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

15.04.2015 13:27



Շուրջ մեկ ամիս է, ինչ Փաստաբանների պալատում առաջ քաշվեց մի ծրագիր, ըստ որի յուրաքանչյուր հինգշաբթի ՀՀ բոլոր քաղաքացիները՝ անկախ սոցիալական դիրքից, կարող են ստանալ անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Մելանյա Առուստամյանը մանրամասնել է նախագծի գործունեությունը:

Նկատի ունենալով, որ Հանրային պաշտպանի գրասենյակը իրականացնում է անվճար խորհրդատվություն ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում՝ քրեական վարույթներ իրականացնող նախադրույթ իրականացնող, կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին ազատել իրավաբանական օգնության վճարից և տրամադրել անվճար հանրային պաշտպան և նկատի ունենալով այն հանգամանքը, որ կան որոշ կատեգորիաներ, որոնք 13 են և կարող են ստանալ անվճար խորհրդատվություն՝ նախատեսված փաստաբանության մասին օրենքով, շրջանակը սրանով ավարտվում է: Այս իսկ պատճառով մենք որոշեցինք անվճար իրավաբանական խորհրդատվություն տալ այն խավերին, որոնց օրենքով չի հասնում: Փաստաբանական դպրոցի հիմնադրամի հետ համատեղ որոշվեց, որ ամեն հինգշաբթի ժամը 10:00-17:00 իրականացնել անվճար խորհրդատվություն բոլորի համար՝

խորհրդատվությունը տրվում է թե՛ քաղաքացիական, թե՛ քրեական և թե՛ վարչական գործերով: Այն կարող է լինել ոչ միայն բանավոր, այլ նաև առանձին դեպքերում գրավոր խորհրդատվություն՝ կազմել դիմումներ, բողոքներ, հայցադիմումներ:

Սրանով բեռնաթափվում է նաև մնացած օրերին կատարվող հանրային պաշտպանի գործը և գործնաբան արագացվում է բոլորի համար, -նշել է Մելանյա Առուստամյանը:

Եթե գործը մտնում է դատարան այդ ժամանակ ևս նշանակվում է ներկայացուցիչ և գործը մինչև վերջ շարունակվում է:

Ըստ վիճակագրության անցյալ տարվա առաջին եռամսյակում քաղաքացիական և վարչական գործերով դիմումներ եղել են մոտ 75-ը, 2015 թ.-ին արդեն՝ 290: Վերջին 3 հինգշաբթի օրվա ընթացքում սպասարկվել են մոտ 100 այցելու, -տեղեկացրել է ՀԴԳ ղեկավարը:

Ծրագրի համար ժամկետներ չնշվեցին: ‘Այս ծրագիրը կշարունակվի այնքան ժամանակ, ինչքան որ խորհրդատվության պահանջը լինի, քանի որ տեսնում են, որ քաղաքացիներն ունեն դրա կարիքը’,- եզրափակել է Առուստամյանը:

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 2){ updateCommentsCount(window.location.href); } })
```